ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№___5291-Ա___ « 26 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի Հ.4544-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 14.11.2025 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2012 թվականի հունիսի 13-ի «Երևանի Ֆանարջյան փողոցի 1-ին նրբանցքի հ.2 բնակելի տան և հողամասի նկատմամբ Յուրիկ Սերյոժայի Գևորգյանի իրավունքները վերականգնելու, 368.52քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.4544-Ա որոշման/ այսուհետ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ. 204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ «ք.Երևան Ֆանարջյան փողոցի 1-ին նրբանցքի հ.2 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման» բառերով,

2) Որոշման 3-րդ կետում «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Հայկ Մուրադյանին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ